ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը

Հովհաննես Սահակյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստանի Հանրապետություն (ք. Աստանա), 2017 թվականի սեպտեմբերի 19-ից մինչև սեպտեմբերի 22-ը

4. Հրավիրող կողմը.

1) Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիա,

2) Ղազախստանի Հանրապետության աշխատանքի և ազգաբնակչության սոցիալական պաշտպանության նախարարություն

5. Գործուղման նպատակը.

1) Մասնակցություն Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի (այսուհետ՝ Ասոցիացիա) և Ղազախստանի Հանրապետության աշխատանքի և ազգաբնակչության սոցիալական պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ 2017 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև սեպտեմբերի 21-ը կազմակերպված՝ «Կենսաթոշակային ապահովության ֆինանսական կայունությունը» խորագրով միջազգային կոնֆերանսին,

2) Մասնակցություն Ասոցիացիայի հաշվիչ հանձնաժողովի անդամների նոր ընտրությանը,

3) Երկկողմ հանդիպումներ Ասոցիացիային անդամակցող ԱՊՀ երկրների համապատասխան մարմինների ղեկավարների հետ:

6. Քննարկված հարցերը, արդյունքները, ընդունված որոշումները.

20.09.2017թ.

Կոնֆերանսին մասնակցում էին Ասոցիացիային անդամակցող՝ ԱՊՀ անդամ երկրների կենսաթոշակային և սոցիալական կառույցների ղեկավարները, այդ կառույցների, ինչպես նաև այլ կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչները:

Կոնֆերանսի առաջին օրը կազմակերպվեցին այցելություններ Ղազախստանի Հանրապետության «Միասնական կուտակային հիմնադրամ» բաժնետիրական ընկերություն, ինչպես նաև «Կառավարությունը քաղաքացիների համար» պետական կազմակերպություն:

Այցելությունների ընթացքում ներկայացվեցին կառույցների կողմից մատուցվող ծառայությունները, առկա խնդիրները, զարգացման հեռանկարները:

Նույն օրը տեղի ունեցավ նաև Ասոցացիայի հաշվիչ հանձնաժողովի անդամների նոր ընտրություն (հաստատվեց հանձնաժողովի նոր կազմը):

Քննարկվեցին նաև այլ հարցեր, որոնք վերաբերում էին 2018 թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունում նախատեսվող միջազգային կոնֆերանս կազմակերպելու հետ:

21.09.2017թ.

Բացման խոսքով հանդես եկան Ասոցիացիայի նախագահ, ՂՀ «Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ» Բաժնետիրական ընկերության նախագահ Ս.Դյուսենովան, ինչպես նաև Ասոցիացիայի պատվավոր նախագահ, ՌԴ կենսաթոշակային հիմնադրամի կառավարման խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա.Կուրտինը:

Այնուհետև՝ առանձին զեկույցներով հանդես եկան Ղրղզական Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության, Վրաստանի, Բելառուսի համապատասխան կառույցների ներկայացուցիչները, ովքեր ներկայացրեցին իրեց երկրներում գործող կենսաթոշակային

համակարգերը, այդ համակարգերի ֆինանսական կայունության իրավիճակը, հետագա զարգացմանն ուղղված տեսլականները:

Կոնֆերանսին, առանձին զեկույցով հանդես եկավ նաև Հայաստանյան կողմը, որը ներկայացրեց վերջին տարիներին կենսաթոշակային ապահովության բնագավառում տեղի ունեցած բարեփոխումները (զարգացումները), բարեփոխումների հաջողված արդյունքը, շահառուների իրավունքների իրացումն ապահովող տեղեկատվական համակարգը, կենսաթոշակային ապահովության համակարգի հետագա (շարունակական) զարգացմանն ուղղված տեսլականը (միջոցառումները), ինչպես նաև գործող կուտակային համակարգը:

Տեղի ունեցան նաև երկկողմ հանդիպումներ Հայաստանյան և ՌԴ կողմերի միջև, մասնավորապես՝ քննարկվեցին ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության և ՌԴ կենսաթոշակային հիմնադրամի միջև համագործակցության և ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ մեխանիզմներ: Քննարկվեցին երկու պետությունների պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարաններում առկա տեղեկատվության համադրման մեխանիզմները՝ կրկնակի կենսաթոշակ ստանալու դեպքերը բացառելու նպատակով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ

Հ.Սահակյան